ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IE15-21B9-40EB-AC37 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։

ՈՐՈՇՈՒՄ
ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/0119/02/26 ք. Երևան
14 Հունվարի 2026թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ. Կարապետյանի 12.12.2025թ. №664-Ա որոշումը մասնակի՝ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու և պատասխանողից ապացույցներ պահանջելու հարցերը,

ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 08.01.2026 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով (այսուհետ նաև՝ Համակարգ) հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող (Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ. Կարապետյանի 12.12.2025թ. №664-Ա որոշումը մասնակի՝ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին

մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Ներկայացված հայցադիմումը 08.01.2026 թվականին մակագրվել է դատավոր Ա. Դունամայյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 09.01.2026 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպությունից պահանջել ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

ՈՐՈՇԵՑ

1. «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՁԻ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպության՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ. Կարապետյանի 12.12.2025թ. №664-Ա որոշումը մասնակի՝ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՁԻ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱ կազմակերպությունից պահանջել ՀՀՓԿ-ԳՀԱՊՁԲ-55/25 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի փետրվարի 26-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող որոշման՝ «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող Հ. Կարապետյանի 12.12.2025թ. №664-Ա որոշումը մասնակի՝ «ԴԻ ՕՀՄ ԷՆԵՐՁԻ» ՍՊԸ-ն գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասով, հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է նա, իսկ վիճարկվող որոշման իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացվել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

6. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:
7. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Ազատ Դունամալյան

ՎԱՎԵՐԱՑՎԱԾ Է
ԴԱՏԱՎՈՐ Ա.
ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am